

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

MÉTHODE DE LECTURE

POUR LA LANGUE FRANÇAISE

A L'USAGE DES ARMÉNIENS

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԳԱՂՂԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՀՆԹԵՐՑՄԱՆ

Ի ՊԵՏՍ ՀԱՅՈՑ

Տպագրուած է Ս. Աթոռոյս Տպարանին մէջ, մաքուր
թղթի վրայ, քանի մի պատկերներով, յատկապէս մեր
Ազգային Իպրոցներու և ամեն Հայ անհատներու համար,
որոնք կը փափաքին գործնական և դիւրին եղանակաւ վար-
ժուիլ Վաղղիարէն լեզուի ընթերցման մէջ: Բաղկացած է
երկու մասներէ, յորոց առաջնոյն մէջ կը պարունակին գը-
րեր, վանկեր, բառեր, կարճ ընթերցուածներ՝ հայագիր
հնչմամբ և հայերէն նշանակութեամբ միասին. իսկ երկ-
րորդին մէջ կը պարունակին բարոյական մտածութիւններ
և Ազգային Պատմութենէ ու Աշխարհագրութենէ գաղ-
ղիարէն թարգմանուած համառօտ հատուածներ: Կը ծա-
խուի, ինչպէս Ս. Աթոռոյս Գրատան, նոյնպէս և Կ. Պօլսոյ
Երուսաղէմատան մէջ, Գին 100 ֆարայ: